Food and Agriculture Organization of the United Nations

SUSTAINABLE DEVELOPMENT GOALS

ՀԱՅԱՍՏԱՆ
Կայուն զարգացման նպատակներ

ՊԱՐԵՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում կայուն զարգացման Օրակարգ 2030-ին հասնելու բանալի

©FAO/Կարեն Մինասյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2015 թ. սեպտեմբերի 25-ին Միավորված ազգերի կազմակերպության 193 անդամ պետություններ ընդունեցին «Կայուն զարգացման օրակարգ 2030»-ը, որի հիմքում դրվեցին կայուն զարգացման 17 նպատակներ (ԿԶՆ-ներ)՝ 169 թիրախներով և 232 ցուցանիշներով՝ ուղղորդելու կառավարությունների, միջազգային գործակալությունների, հասարակական կազմակերպությունների և այլ կառույցների գործողությունները՝ մինչև 2030 թվականը կայուն զարգացման հասնելու նպատակով:

«Օրակարգ 2030»-ն ամրագրում է մի հավակնոտ ծրագիր՝ ուղղորդելու կայուն զարգացման հասնելու գլոբալ մոտեցումը՝ բոլոր երկրների և շահագրգիռ կողմերի համախմբված ջանքերի միջոցով, չանտեսելով ոչ ոքի: 17 ԿԶՆ-ները համընդհանուր են, ինտեգրացված և անքակտելի՝ ընդգրկելով կայուն զարգացման բոլոր երեք կողմերը՝ սոցիալական զարգացում, շարունակական ու ներառական տնտեսական աճ և շրջակա միջավայրի պաշտպանություն:

«Օրակարգ 2030»-ի նպատակն է լուծումներ գտնել այն համալիր մարտահրավերներին, որոնց այսօր բախվում է երկրագունդը՝ աղքատությանը, սովի ու թերսնուցման վերացմանը և արձագանքում կլիմայի փոփոխությանը: Այս համատեքստում, կենսակայուն պարենային համակարգեր և գյուղատնտեսություն ունենալն էական նշանակություն ունի ԿԶՆ-ների իրականացման տեսակետից, որովհետև դրանք լուծում են սովի և աղքատության խորքային պատճառները, ինչը հնարավորություն կտա ստեղծել ներառական հասարակություն, որտեղ ոչ ոք, մասնավորապես՝ գյուղական համայնքներում բնակվող խոցելի ու կարիքավոր կանայք ու տղամարդիկ, չեն անտեսվում, ինչպես նաև կխթանի բնական ռեսուրսների կայուն կառավարումը:

ԿԶՆ-ները սահմանում են Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում պարենային և գյուղատնտեսական համակարգերին առնչվող՝ տնտեսական, սոցիալական ու բնապահպանական մարտահրավերների հաղթահարման պատշաճ շրջանակ:

Կայուն զարգացման Օրակարգ 2030-ը ներառում է

- **17 նպատակ,**
- **169 թիրախ և**
- **232 ցուցանիշ**

ՊԱՐԵՆԸ և ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության ամենակարևոր ճյուղերից մեկն է: Այն տնտեսական ակտիվության հիմնական աղբյուրն է գյուղական բնակավայրերում և նշանակալի ներդրում ունի երկրի համախառն ներքին արդյունքում: Գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ում (2018 թվականի դրությամբ) կազմել է 13.7 տոկոս, և այն զբաղվածություն է ապահովում երկրի աշխատող բնակչության 24.8 տոկոսի համար, որոնց մոտ 52.1 տոկոսը կանայք են: Վերջիններս չափից դուրս ընդգրկված են սեզոնային և անկայուն զբաղվածության մեջ, իսկ գյուղատնտեսության մեջ ներգրավված կանանց 82.1 տոկոսն աշխատում է ոչ ֆորմալ ձևով:

Հայաստանում գյուղատնտեսական նշանակության հողատարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 2,044,200 հեկտար: Այն կազմում են երկրի ընդհանուր տարածքի 68.8 տոկոսը, և մեկ շնչին բաժին է ընկնում 0.15 հեկտար վարելահող: 2016 թվականի դրությամբ՝ գյուղատնտեսական նշանակության հողատարածքների 21.3 տոկոսը պատկանում էր ընտանեկան գյուղացիական տնտեսություններին: Միևնույն ժամանակ՝ չմշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի ծավալը մտահոգիչ է:

Գյուղատնտեսական նշանակության հողերը սեփականաշնորհված են, և ներկայում մոտ 346,000 մասնավոր ընտանեկան գյուղացիական տնտեսություններին սեփականության իրավունքով պատկանում են ընդհանուր հաշվով 513,000 հա գյուղատնտեսական հողեր. այս տնտեսություններն արտադրում են ընդհանուր գյուղատնտեսական արտադրանքի ավելի քան 96.8 տոկոսը (2016թ.): Փոքր տնտեսությունները գերակշիռ մեծամասնություն են՝ ներկայացնելով բոլոր գյուղացիական տնտեսությունների մոտ 95 տոկոսը, և տիրապետում են միջինը 1.4 հա չափի հողատարածքների, որոնք որպես կանոն մասնատված են երեքից չորս հողակտորի: Գյուղատնտեսական հողատարածքների ամենափոքր չափերը գտնվում են Արարատի մարզում (Արարատյան դաշտավայր)՝ 0.72 հա, և Տավուշի մարզում՝ 0.86 հա: Փոքր հողատերերն արտադրում են համախառն գյուղատնտեսական արդյունքի մեծ մասը՝ մոտ 97 տոկոսը:

Հայաստանի տարածքը բնութագրվում է բարձր սեյսմիկ ակտիվությամբ և ինտենսիվ արտածին գործընթացներով, որոնք նպաստում են սողանքների և հողերի էրոզիայի առաջացմանը: Հայաստանում առկա մեկ այլ խոշոր հիմնախնդիր է հողերի աղակալումը:

Ակնկալվում է, որ հողի որակին, ջրի առկայությանն ու բնական

Գյուղատնտեսության աճի տեմպերը ՀՆԱ-ում և զբաղվածությունը գյուղատնտեսության մեջ (%)



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե (ARMSTAT)



ՊԱՐԵՆԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԱԿԱՐԳ 2030-ՈՒՄ

Կայուն զարգացման 17 նպատակները.

Նպատակ 1 Ամենուրեք վերացնել աղքատությունը՝ իր բոլոր ձևերով ու դրսևորումներով

Նպատակ 2 Վերացնել սովը, հասնել պարենային ապահովության ու բարելավված սնուցման, խթանել գյուղատնտեսության կայուն զարգացումը

Նպատակ 3 Ապահովել առողջ կյանք և խթանել բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից

Նպատակ 4 Ապահովել ներառական ու որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորություններ

Նպատակ 5 Հասնել գենդերային հավասարության և զորացնել բոլոր կանանց ու աղջիկներին

Նպատակ 6 Ապահովել բոլորի համար ջրի ու սանիտարական պայմանների հասանելիություն

Նպատակ 7 Ապահովել մատչելի, հուսալի, կայուն և ժամանակակից էներգիայի հասանելիություն

Նպատակ 8 Խթանել համապարփակ և կայուն տնտեսական աճ, զբաղվածություն և արժանապատիվ աշխատանք բոլորի համար

Նպատակ 9 Ստեղծել դիմակայուն ենթակառուցվածքներ, աջակցել կայուն արդյունաբերության զարգացմանը և խթանել նորարարությունը

Նպատակ 10 Կրճատել անհավասարությունը երկրների ներսում և դրանց միջև

Նպատակ 11 Քաղաքները դարձնել ներառական, դիմակայուն, անվտանգ և կայուն

Նպատակ 12 Ապահովել սպառման և արտադրության կայուն մոդելներ

Նպատակ 13 Ձեռնարկել անհապաղ գործողություններ՝ պայքարելու կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների դեմ

Նպատակ 14 Ապահովել օվկիանոսների, ծովերի ու ջրային պաշարների պահպանությունը և կայուն օգտագործումը

Նպատակ 15 Տանտառների կայուն կառավարում, անապատացման դեմ պայքար, հողերի դեգրադացման դադարեցում և շրջադարձում, կենսաբազմազանության կորստի կասեցում

Նպատակ 16 Թթանել արդար, խաղաղ և ներառական հասարակությունների կառուցումը

Նպատակ 17 Ակտիվացնել գլոբալ գործընկերությունը՝ հանուն կայուն զարգացման

©FAO/Կարեն Մինասյան

աղետների առաջացմանն առնչվող հիմնախնդիրները շարունակելու են վատթարանալ՝ կլիմայի փոփոխության բացասական ազդեցության հետևանքով:

Երկրի տարածքի 76.5 տոկոսը գտնվում է ծովի մակարդակից 1,000 մետրից մինչև 2,500 մետր բարձրության վրա, իսկ միջին բարձրությունը կազմում է՝ 1,800 մ: Հայաստանի հողատարածքների գերակշիռ մասը գտնվում է լեռնային և բարձր լեռնային գոտիներում. սա կանխորոշում է գյուղատնտեսական արտադրության և պարենային ապրանքների առկայության առանձնահատկությունները: Արարատյան դաշտավայրում և հարթավայրային ու մերձարևադարձային գոտիներում առկա են բուսաբուծության համար ամենապաստավոր պայմանները, մինչդեռ լեռնային շրջաններն առավելապես հարմար են անասնաբուծության համար: Հայաստանի գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքում բուսաբուծությունը գերակշռում է և այն կազմում է ընդհանուր գյուղատնտեսական արտադրանքի 55.4 տոկոսը (2016թ.): Հայաստանի բնական և կլիմայական պայմանների պատճառով գյուղատնտեսությունը չափազանց խոցելի է տարատեսակ բնական աղետների և սթրեսային գործոնների նկատմամբ: Երկրի գրեթե բոլոր մարզերը խոցելի են հիդրոօդերևութաբանական վտանգների նկատմամբ, (մասամբ՝ կապված կլիմայի փոփոխության), այդ թվում՝ սառնամանիքների, երաշտների, կարկտահարության ու սեզոնային հեղեղումների հետ: Վերոնշյալ երևույթները հսկայական վնաս են պատճառում գյուղատնտեսական արտադրությանը: Հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների հետևանքով գյուղատնտեսական արտադրանքի տարեկան միջին կորստի չափը 2016 թվականին, ըստ գնահատականների, կազմել է 72 միլիոն ԱՄՆ դոլար:

Համաձայն ՊԳԿ 2019 թ. «Պարենային անվտանգության և սնուցման վիճակն աշխարհում» զեկույցի, Հայաստանն արձանագրել է թերսնվածության տարածվածության (ԹՏ) զգալի կրճատում. այս ցուցանիշի միջոցով չափվել է սովի ու պարենային անապահովության մակարդակը 2004-ից մինչև 2017 թվականը: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում թերսնվածության տարածվածությունը 2004-2006 թվականների 7.8 տոկոսից նվազել է՝ 2015-2017 թվականներին հասնելով 4.3 տոկոսի: Ազգային վիճակագրական տվյալները ցույց են տվել, որ 2015 թվականին տնային տնտեսությունների 16 տոկոսը դասակարգվել է որպես պարենային անապահովություն մեջ գտնվող: Պարենային անապահովությունը զուգակցվում է երեխաների շրջանում թերսնուցման և սնուցողական միկրոտարրերի պակասության կրկնակի բեռով. 2015 թվականին մինչև 5 տարեկան երեխաների 9 տոկոսի մոտ արձանագրվել է թերաճություն, իսկ 14 տոկոսի մոտ՝ գերքաշություն:

Պարենային անվտանգությունն անքակտելիորեն կապված է աղքատության հետ: Աղքատությունը լուրջ մտահոգություն է, քանի որ բնակչության գրեթե մեկ երրորդը (29.8 տոկոսը) աղքատ է (2016 թ.): Բազմաթիվ գյուղական համայնքներում դեռևս չհաղթահարված հիմնախնդիրների թվում են՝ նախադպրոցական հաստատությունների բացակայությունը, տների և կրտսեր դպրոցների միջև մեծ հեռավորությունները, կեղտաջրերի հեռացման համակարգերի սահմանափակ հասանելիությունը, ճանապարհների անբավարար որակն ու միջհամայնքային հանրային տրանսպորտի բացակայությունը:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԶՆ-ՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՊԳԿ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Որպես Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված գործակալություն, ՊԳԿ-ն ծավալուն փորձ ունի պարենի և գյուղատնտեսության համատեքստում կայուն զարգացմանն աջակցելու գործում՝ ապահովելով նորմեր, ստանդարտներ և տվյալներ՝ ի նպաստ ԿԶՆ-ների իրականացման, մշտադիտարկման ու դրանց վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման:

ՊԳԿ-ն ՄԱԿ-ի այն գործակալությունն է, որը պատասխանատու է 21 ցուցանիշների գծով՝ հետևյալ ԿԶՆ-ների ներքո.
ԿԶՆ 2 (սովի վերացում),
ԿԶՆ 5 (գենդերային հավասարություն),
ԿԶՆ 6 (մաքուր ջուր և սանիտարական պայմաններ),
ԿԶՆ 12 (պատասխանատու սպառում և արտադրություն),
ԿԶՆ 14 (կյանքը ջրի տակ) և
ԿԶՆ 15 (կյանքը ցամաքում):

Որպես պատասխանատու գործակալություն, ՊԳԿ-ն զբաղվում է ազգային աղբյուրներից տվյալների հավաքագրման, վերստուգման ու վավերացման, ներդաշնակեցման աշխատանքներով, հաշվարկում է տարածաշրջանային և գլոբալ ագրեգացված ցուցանիշներ և դրանք հասանելի է դարձնում միջազգային հաշվետվությունների կազմման համար: ՊԳԿ-ն նաև պատասխանատու է 21 ցուցանիշների մեթոդաբանական մշակման աշխատանքների առաջնորդման, ինչպես նաև երկրներին համակարգված տեխնիկական օժանդակության տրամադրման համար՝ նպատակ ունենալով զարգացնել վերջիններիս՝ երկարաժամկետ հատվածում սեփական տվյալները գենեռացնելու կարողությունները:

ՊԳԿ-ն երկրներին աջակցում է ԿԶՆ բազմակի թիրախների հասնելու գործում, քանի որ պարենը և գյուղատնտեսությունն վերաբերում են բոլոր ԿԶՆ-ներին: Աջակցության նպատակով ՊԳԿ-ն կիրառում է «Երկրի առաջնահերթությունների ծրագրային շրջանակ» (ԵԱԾՇ) գործիքը, որի միջոցով սահմանվում են տվյալ երկրի մակարդակով ռազմավարական գերակայությունները:

ՀՀ կառավարությունն ու ՊԳԿ-ն, մասնակցային բազմաշահակիր մոտեցման կիրառմամբ, համաձայնել են կենսագործել ԵԱԾՇ-ն, որն ուղղված է երեք գերակա ոլորտների:

ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 1. ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ և ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 2. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ, ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ և ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 3. ՊԱՐԵՆԱՅԻՆ և ՍՆՈՒՑՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏՈՒՄ

Երեք գերակա ոլորտներում ծրագրերը բարձրացնելու են ֆերմերների, անտառապահների և ձկնաբույծների մրցունակության մակարդակը և բարելավելու են գյուղական համայնքներում կենսապայմանները՝ ուղղակիորեն աջակցելով, մասնավորապես, ԿԶՆ 2-ի (սովի զրոյական մակարդակ), ԿԶՆ 13-ի (կլիմային վերաբերող գործողություններ) և ԿԶՆ

© FAO/Անի Գրիգորյան

15-ի (կյանքը ցամաքում) կենսագործմանը: Այս ոլորտները վերաբերում են նաև տեխնիկական, սոցիալական ու տնտեսական խնդիրներին՝ ճանաչելով կյանքի տարբեր փուլերում կանանց ու տղամարդկանց և ամենակարիքավոր անձանց կարիքները՝ «Օրակարգ 2030»-ում ամրագրված՝ «ոչ ոք չպիտի անտեսվի» սկզբունքին համահունչ:

Առանձնացված երեք ոլորտներն անդրադառնում են կառավարության սահմանած գերակա ոլորտներին, ինչպես դրանք արտացոլված են առանցքային ազգային փաստաթղթերում՝ շեշտադրելով գյուղատնտեսության, ձկնաբուծարանների և անտառտնտեսության զարգացումը և փոքր հողատերերի ու ընտանեկան գյուղացիական տնտեսությունների կարողությունների ընդլայնումը:

Բացի ԿԶՆ-ների իրագործման նպատակով տրամադրվող տեխնիկական աջակցությունից, ՊԳԿ-ն Հայաստանի Հանրապետությանը նաև օժանդակել է ԿԶՆ տեղայնացման գործընթացում ԿԶՆ ազգային թիրախների և ցուցանիշների որոշարկման և մշտադիտարկման գործում: ՊԳԿ-ն տրամադրել է խորհրդատվություն ոլորտային քաղաքականությունների շրջանակները ԿԶՆ-ներին համապատասխանեցման վերաբերյալ, բարձրացրել է «Օրակարգ 2030»-ի կենսագործման տեսակետից պարենի և գյուղատնտեսության առանցքային դերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը, առաջարկություններ է ներկայացրել էական այնպիսի գործողությունների առնչությամբ, որոնք պետք է ձեռնարկվեն վերաբերելի ԿԶՆ-ների իրագործման ու մշտադիտարկման նպատակով, ինչպես նաև տրամադրել է մեթոդաբանական աջակցություն ՊԳԿ-ի պատասխանատվության ներքո գտնվող ԿԶՆ 21 ցուցանիշների վերաբերյալ:

Գյուղատնտեսությունը Հայաստանի կայուն զարգացումը պայմանավորող առանցքային ճյուղերից մեկն է: Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունն առաջնորդում է պարենի և գյուղատնտեսության հետ կապված ԿԶՆ-ների իրագործումն ու մշտադիտարկումը՝ Վիճակագրական կոմիտեի և վերաբերելի այլ հաստատությունների հետ համատեղ:

ՊԳԿ-Ի ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԳՏՆՎՈՂ ԿՋՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՑԱՆԿ

ՑՈՒՑԱՆԻՇ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ/ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ	ԿԱՐԳ[1]
2.1.1 ԹԵՐՍԼՈՒՑՄԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆ	ՊԳԿ	I
2.1.2 ՉԱՓԱՎՈՐ ԿԱՄ ՍՈՒՐ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՀԻՄՆՎԵԼՈՎ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿԻ (ՊԱԳՍ) ՎՐԱ	ՊԳԿ	II
2.3.1 ՄԵԿ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻԱՎՈՐԻՆ ԸՆԿՆՈՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԸՍՏ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ /ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ/ ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓԻ ԴԱՍԵՐԻ	ՊԳԿ	II
2.3.2 ՓՈՔՐԱԾԱՎԱԼ ՄԹԵՐՔ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԵԿԱՄՈՒՏԸ ԸՍՏ ՍԵՌԻ և ՏԵՂԱԲԻԿ ԼԻՆԵԼՈՒ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ	ՊԳԿ, ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿ	II
2.4.1 ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՈՒ ԿԱՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱՁԱԵՐ ԿԻՐԱՌՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ	ՊԳԿ ՄԱՇՄՇ	II
2.5.1 ԲՈՒՍԱԿԱՆ ՈՒ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՄԹԵՐՎԱԾ ՊԱՐԵՆԱՅԻՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՈՒ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ	ՊԳԿ ՄԱՇՄՇ	I
2.5.2 ՏԵՂԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԱԾ Է ՈՐՊԵՍ ՎՏԱՆԳԻ ԵՆԹԱԿԱ, ՎՏԱՆԳԻ ՈՉ ԵՆԹԱԿԱ ԿԱՄ ԱՆՀԵՏԱՑՄԱՆ ԱՆՀԱՅՏ ԱՍՏԻՃԱՆԻ ՎՏԱՆԳԻ ԵՆԹԱԿԱ	ՊԳԿ ՄԱՇՄՇ	I
2.Ա.1 ՊԵՏԱԿԱՆ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱԹԻՎԸ	ՊԳԿ, ԱՄՀ	I
2.Գ.1 ՊԱՐԵՆԻ ԳԼԻ ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇԸ	ՊԳԿ	II
5.Ա.1 (Ա) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՊԱՀՈՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ (ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԶԲԱՂՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ)՝ ԸՍՏ ՍԵՌԻ, (Բ) ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԿԱՄ ԻՐԱՎԱԿԻՐՆԵՐԻ ՄԵՋ՝ ԸՍՏ ՀՈՂԻ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ	ՊԳԿ ՄԱԿ-ԿԱՆԱՅՔ, ՄԱԿ-Ի ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ (ՄԱՎԲ), ՄԱԿ-Ի ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԾՐԱԳԻՐ (ՄԱՇՄՇ), ՄԱԿ-Ի ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԾՐԱԳԻՐ, ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿ	II
5.Ա.2 ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՏԵՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ (ԱՅԴ ԹՎՈՒՄ ՍՈՎՈՐՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ) ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ Է ԿԱՆԱՆՑ ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀՈՂԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ և (ԿԱՄ) ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ	ՊԳԿ, ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿ, ՄԱԿ-ԿԱՆԱՅՔ	II
6.4.1 ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ	ՊԳԿ, ՄԱՇՄՇ, ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ԲՊՄՄ), ՄԱՎԲ,, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՏՀԶԿ), ԵՎՐՈՍՏԱՏ	II
6.4.2 ՋՐԻ ՊԱԿԱՍԻ ՊԱՏՃԱՌԱԾ ԼԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ (ՍԹՐԵՍԻ) ՄԱԿԱՐԴԱԿԸ. ՄԱՔՈՒՐ ՋՐԻ ԵՏ ՔԱՇՎԵԼԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՔՈՒՐ ՋՐԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՄԲ	ՊԳԿ, ՄԱՇՄՇ, ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ԲՊՄՄ), ՄԱՎԲ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՏՀԶԿ), ԵՎՐՈՍՏԱՏ	I
12.3.1 ՊԱՐԵՆԻ ԳԼՈԲԱԼ ԿՈՐՍՏԻ ՀԱՄԱԹԻՎ	ՊԳԿ	II
14.4.1 ԿԵՆՍԱԲԱՆՈՐԵՆ ԿԱՅՈՒՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՁԿՆԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ	ՊԳԿ	I
14.6.1 ԱՆՕՐԻՆԱԿԱՆ, ՉԳՐԱՆՑՎԱԾ և ՉԿԱՐԳԱՎՈՐՎԱԾ ՁԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԱՍՏԻՃԱՆԸ	ՊԳԿ	II
14.7.1 ԿԱՅՈՒՆ ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՊԵՍ ՓՈՔՐ ԿՂԶԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԹՈՒՅԼ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ ՈՒ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՆԱ-Ի ՏՈԿՈՍ	ՊԳԿ ՄԱՇՄՇ-ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ (ԲՊՄՀԿ/WCMC)	II
14.Բ.1 ԵՐԿՐՆԵՐԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ ԻՐԱՎԱԿԱՆ / ԿԱՐԳԱՎՈՐՈՂ / ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ / ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՊԱՇՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ, ՈՐԸ ՃԱՆԱՉՈՒՄ և ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ՓՈՔՐ ՁԿՆՈՐՍԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՒՏՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ	ՊԳԿ	II
15.1.1 ԱՆՏԱՌԱԾԱԾԿ ՏԱՐԱԾՔԵՐԸ՝ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ՈՐՊԵՍ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՂԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՈԿՈՍ	ՊԳԿ, ՄԱՇՄՇ	I
15.2.1 ԱՆՏԱՌՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՌԱՋԸՆԹԱՑ	ՊԳԿ, ՄԱՇՄՇ	I
15.4.2 ԼԵՌՆԵՐԻ ԿԱՆԱՉ ԾԱԾԿՈՒՑԹԻ ՀԱՄԱԹԻՎ	ՊԳԿ, ՄԱՇՄՇ	I

1. **Կարգ I.** նրանք, որոնց դեպքում գոյություն ունի հաստատված մեթոդաբանություն, իսկ տեղյալները լայնորեն հասանելի են:
Կարգ II. նրանք, որոնց դեպքում գոյություն ունի հաստատված մեթոդաբանություն, սակայն որոնց դեպքում տեղյալները հեշտությամբ հասանելի չեն: Կարգերի դասակարգումը թարմացվել է 2019 թվականի ապրիլին:

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈՒՂԵՐՁՆԵՐ

ՊԱՐԵՆԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԱԿԱՐԳ 2030-ԻՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ ՈՒՆԵՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Կենսակայուն պարենային համակարգեր և գյուղատնտեսություն ունենալն էական նշանակություն ունի ԿԶՆ-ների իրականացման տեսակետից, որովհետև դրանք լուծում են թերսնուցման և աղքատության խորքային պատճառները, ինչը հնարավորություն կտա ստեղծել ներառական հասարակություն, որտեղ ոչ ոք, մասնավորապես՝ գյուղական համայնքներում բնակվող խոցելի ու կարիքավոր բնակչության, չեն անտեսվում, ինչպես նաև կխթանի բնական ռեսուրսների կայուն կառավարումը: ԿԶՆ-ները սահմանում են Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում, ներառյալ՝ Հայաստանում, պարենային և գյուղատնտեսական համակարգերին առնչվող՝ տնտեսական, սոցիալական ու բնապահպանական մարտահրավերների հաղթահարման պատշաճ շրջանակ:

ԿԶՆ-ՆԵՐԸ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՆ. ՊԱՀԱՆՋՎՈՒՄ ԵՆ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Կայուն զարգացման Օրակարգ 2030-ը սահմանում է համընդհանուր նպատակներ և թիրախներ, որոնք ընդգրկում են ողջ աշխարհը՝ ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրները: Դրանք պահանջում են գործողություններ յուրաքանչյուրի կողմից և ակնկալում են համատեղ աշխատանքի նոր եղանակներ: Նպաստող առանցքային գործոններն են՝ գործընկերությունը, համերաշխությունը և համախմբման պատրաստակամությունը՝ անկախ աշխարհագրական տեղադրությունից, ոլորտից, մասնագիտությունից և գիտակարգից: ԿԶՆ-ները միջոլորտային և ինտեգրացված խնդիր են, որը հնարավոր է լուծել միայն բազմաթիվ դերակատարների (կառավարություններ, Միավորված ազգերի կազմակերպության գործակալություններ, կոոպերատիվներ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, մասնավոր հատված և այլ առանցքային դերակատարներ) միջև ու ոլորտների մի լայն շրջանակ ընդգրկող շատ սերտ համագործակցության ու համաշխարհային մասշտաբով գործընկերությունների միջոցով:

ՊԳԿ-Ն ԱՋԱԿՑՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՆ՝ ՀԱՄՆԵԼՈՒ ՕՐԱԿԱՐԳ 2030-ԻՆ

Որպես Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված գործակալություն, ՊԳԿ-ն ծավալուն փորձ ունի պարենի և գյուղատնտեսության համատեքստում կայուն զարգացմանն աջակցելու գործում՝ ապահովելով նորմեր, ստանդարտներ և տեղյակներ՝ ի նպաստ ԿԶՆ-ների իրականացման, մշտադիտարկման ու դրանց վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման: ՊԳԿ-ն լայնորեն ճանաչված է իր խորհրդատվական կարողությունների, համաշխարհային մասշտաբով ընդգրկման, մշտադիտարկում իրականացնելու փորձագիտության և Օրակարգ 2030-ի իրագործմանն աջակցելուն միտված գործընկերությունների ձևավորման ու քաղաքականությունների մշակման փորձի համար՝ որպես չեզոք համակարգող:

ԿԶՆ-ՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋ Է՝ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՀԱՄՆԵԼՈՒ ՏԵՍԱԿԵՏԻՑ

ՊԳԿ-ն երկար տարիների փորձ ու զգալի համեմատական առավելություններ ունի՝ կապված քաղաքականությունների ապացուցահեն մշակման նպատակով տեղյակների ու վիճակագրության գեներացման հետ: ՊԳԿ-ն ՄԱԿ-ի այն գործակալությունն է, որը պատասխանատու է կարգված 232 ԿԶՆ ցուցանիշներից 21-ի գծով, որոնք հատկորոշվել են ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի կողմից և վերաբերում են ԿԶՆ 2-ին (սովի վերացում), ԿԶՆ 5-ին (գենդերային հավասարություն), ԿԶՆ 6-ին (մաքուր ջուր և սանիտարական պայմաններ), ԿԶՆ 12-ին (պատասխանատու սպառում և արտադրություն), ԿԶՆ 14-ին (պյանքը ջրի տակ) և ԿԶՆ 15-ին (պյանքը ցամաքում): ՊԳԿ-ն ևս 9 ցուցանիշների գծով հանդիսանում է գործընկեր գործակալություն: ԿԶՆ ցուցանիշների վերաբերյալ վիճակագրություն վարելու կարողությունների ամրապնդման հարցում ՊԳԿ-ի աջակցությունը կարող է օգնել երկրներին, այդ թվում՝ Հայաստանին, որպեսզի վերջիններս հաջողությամբ հաղթահարեն մշտադիտարկման նոր մարտահրավերները: ՊԳԿ վիճակագրությունը կարող են օգտագործել ինչպես կառավարությունները՝ քաղաքականությունների ձևակերպման ու վերահսկողության նպատակով, այնպես էլ ֆերմերները՝ հեռահար պլանավորման ու տնտեսական որոշումների կայացման նպատակով:

ՊԳԿ-Ի ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԿԶՆ-ՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Թունաքիմիկատների որակի վերահսկման կարողությունների ամրապնդում

2 3 6 12

Գյուղատնտեսական ներդրանքներն ապահով սննդամթերքի ու անասնակերի արտադրության հարցում ունեն առանցքային նշանակություն: Կենտրոնական պլանավորմամբ տնտեսության փլուզումից և շուկաների ազատականացումից հետո բազմաթիվ երկրներից Հայաստան են ներմուծվել ու օգտագործվել նոր թունաքիմիկատներ, հաճախ՝ առանց որակի ու իսկության նկատմամբ պատշաճ վերահսկողության: Հնարավոր այն հանգամանքին, որ թունաքիմիկատների կիրառումը բույսերի վնասատուների, հիվանդությունների ու մոլախոտերի դեմ պայքարում կարևոր է՝ որակյալ գյուղատնտեսական արտադրանքի ապահովման նպատակով, դրանք նաև կարող են բացասական հետևանքներ ունենալ մարդկանց ու կենդանիների առողջության, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա: Հետևաբար, էական նշանակություն ունի ներմուծված թունաքիմիկատների որակի վերահսկողության և արտադրված սննդամթերքում թունաքիմիկատների մնացորդային քանակների արդյունավետ հսկողության և մշտադիտարկման համակարգի ապահովումը: Այսուհանդերձ, Հայաստանում բացակայում էին անհրաժեշտ տեխնիկական կարողությունները և սարքավորումները:

Հունաստանի կառավարության կողմից ֆինանսավորված, 2 մլն ԱՄՆ դոլար բյուջեով «Հայաստանում թունաքիմիկատների որակի վերահսկողության և դրանց մնացորդային քանակների նկատմամբ մոնիտորինգի աջակցության» ծրագրի միջոցով ՊԳԿ-ն Հայաստանին աջակցել է հսկիչ թունաբանական լաբորատորիայի հիմնադրման գործում: Լաբորատորիան, որը 2015 թվականին բացվեց Երևանում, ամբողջությամբ հագեցված է սարքավորումներով՝ իրականացնելու թունաքիմիկատների որակի փորձաքննություն՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Քանի որ Հայաստան թունաքիմիկատների ներկրման ծավալներն ու տեսականին տարեցտարի ավելանում են, այս նոր լաբորատորիան երկրում ստեղծում է հնարավորություն՝ բարելավելու գյուղատնտեսական ապրանքների որակն ու նվազեցնել թունաքիմիկատների բացասական ազդեցությունը մարդկանց, կենդանիների և շրջակա միջավայրի վրա: Լաբորատորիայի աշխատակազմը վերապատրաստվել է, որպեսզի կարողանա իրականացնել թունաքիմիկատների որակի վերլուծություն՝ կառավարությանն աջակցելով հայաստանյան շուկայում հնացած, ցածրորակ, կեղծված կամ չթույլատրված թունաքիմիկատների տարածվածությունը նվազեցնելու հարցում: Այս լաբորատորիան իր տեսակի մեջ եզակի է, և միակն է ամբողջ Կովկասյան տարածաշրջանում:

Ծրագիրն իր նշանակալի նպաստն է բերում հանրային առողջության պաշտպանությանն ու թունաքիմիկատների կիրառման հետ կապված ռիսկերի նվազեցմանը. ԿԶՆ թիրախ 3.9 (կրճատել վտանգավոր քիմիական նյութերի հետևանքով մահերի և հիվանդությունների թիվը), ԿԶՆ թիրախ 6.3 (բարելավել ջրի որակը՝ նվազագույնի հասցնելով վտանգավոր քիմիկատների և նյութերի արտահոսքերը), ԿԶՆ թիրախ 12.4 (հասնել քիմիական նյութերի բնապահպանորեն անվտանգ կառավարմանը և զգալիորեն կրճատել դրանց արտազատումը մթնոլորտի, ջրի և հողի մեջ): Ծրագիրը նաև զգալիորեն նպաստում է գյուղատնտեսական հատվածի կայուն զարգացմանը՝ պակաս վտանգավոր գյուղատնտեսական արտադրական ռեսուրսների միջոցով, ինչը հանգեցնում է գյուղատնտեսական աշխատաեղանակների կատարելագործման, առավել անվտանգ սննդամթերքի և ավելի մաքուր շրջակա միջավայրի. ԿԶՆ թիրախ 2.1 (վերջ դնել սովին և ապահովել անվտանգ, սննդարար և բավարար սննդի մատչելիությունը):

Աջակցություն Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությանն ու Վիճակագրական կոմիտեին՝ ԿԶՆ-ների իրականացման և մշտադիտարկման հարցում

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17

Գյուղատնտեսությունը Հայաստանի կայուն զարգացումը պայմանավորող առանցքային ճյուղերից մեկն է, ինչպես նաև կառավարության առաջնահերթություններից մեկը: Էկոնոմիկայի նախարարությունն այն կառույցն է, որը պատասխանատու է պարենի և գյուղատնտեսության հետ կապված ԿԶՆ-ների կենսագործման, թիրախների որոշարկման, քաղաքականության պլանավորման փաստաթղթերի համապատասխանեցման համար, ինչպես նաև, Վիճակագրական կոմիտեի հետ համատեղ, ԿԶՆ թիրախներին հասնելու առաջընթացի մշտադիտարկման համար:

ՊԳԿ ծրագրերից մեկը, որը մեկնարկել էր 2017 թվականին՝ ԿԶՆ-ների իրագործման ու մշտադիտարկման գործում աջակցում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը, ձգտում էր ընդլայնել պետական իշխանության իրազեկվածությունն ու հանձնառությունը՝ ապահովելու պարենային անվտանգություն, սնուցում և սոցիալական պաշտպանություն: Այդ ծրագրի նպատակների թվում էին նաև Էկոնոմիկայի նախարարության և պետական իշխանության այլ վերաբերելի մարմինների՝ ԿԶՆ-ների իրագործման ու մշտադիտարկման տեխնիկական կարողությունների զարգացումը:

Իրականացվել է ելակետային ուսումնասիրություն՝ գնահատելու, թե Էկոնոմիկայի նախարարությունն ինչ դիրքորոշում ունի ԿԶՆ-ների ազգայնացման ու կենսագործման վերաբերյալ՝ հատուկ ուշադրություն դարձնելով նախարարության կողմից գերակա հռչակված թիրախներին ու ՊԳԿ-ի պատասխանատվության ներքո գտնվող ցուցանիշներին:

Ծրագրի միջոցով՝ Պարենային անապահովության փորձառության սանդղակի (ՊԱՓՍ) հիման վրա մշակված մոդուլը, որի նպատակն էր ԿԶՆ

ցուցանիշ 2.1.2-ի վերաբերյալ տվյալների հավաքագրումը, ներառվել է Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) մեջ, և անց են կացվել կարողությունների զարգացման գործողություններ ՊԳԿ-ի պատասխանատվության ներքո գտնվող ԿԶՆ 21 ցուցանիշների առնչությամբ:

Տեխնիկական օժանդակություն՝ խաղողի ֆիլոքսերայի նկատմամբ դիմացկուն տնկանյութի արտադրության նպատակով

2

Հայաստանը համարվում է խաղողի մշակության հնամենի օջախներից մեկը: Հայաստանում գինեգործության պատմությունը սկիզբ է առել ավելի քան 6000 տարի առաջ: Ծովի մակարդակից երկրի տարածքի բարձրությունների լայն միջակայքը, ինչպես նաև հողային ու կլիմայական պայմանների բազմազանությունը ստեղծել են նպաստավոր միջավայր խաղողագործության համար: Այսօր ավելի քան 60 հայաստանյան ընկերություններ արտադրում են ավելի քան 400 տեսակի գինի: Հայաստանում գտնվող խաղողի բոլոր այգիների 95 տոկոսը պատկանում է փոքր գյուղացիական տնտեսություններին:

Ներկայում այս ոլորտը գտնվում է իր զարգացման առանցքային փուլում:

Մինչև վերջերս Հայաստանը (բացառությամբ Տավուշի մարզի) համարվում էր ֆիլոքսերազերծ գոտի, քանի որ երկրի կլիմայական պայմանները նպաստավոր չէին այս միջատի կենսաբանական զարգացման համար: Այդուհանդերձ, ներկայում Հայաստանի խաղողագործության ճյուղը կարծես թե դարձել է խոցելի, միգուցե՝ շրջակա միջավայրի (կլիմայական) պայմանների փոփոխության պատճառով, որոնք երկիրը խոցելի են դարձրել այս վնասատուի տարածման համար:

2017 թվականից ՊԳԿ-ն Հայաստանի Հանրապետության կառավարությանը տրամադրել է տեխնիկական աջակցություն՝ ուղղված երկրում գյուղատնտեսության կայուն զարգացման նպատակով նոր մոտեցումների և գործիքների ներդրմանը՝ ստեղծելով խաղողագործության ճյուղի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ հիմքեր, որոնք հավանաբար կհանգեցնեն արտադրության ու արտահանման ծավալների աճի: ՊԳԿ ծրագիրն անդրադարձել է խաղողի ֆիլոքսերայի առաջացրած խնդիրներին և իրականացրել է նախապատրաստական աշխատանքներ՝ ուղղված Հայաստանում խաղողի կայուն արտադրությանը: Դրանք են՝ ավելի քան 300 սորտերով խաղողի կոլեկցիոն այգու, ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած, խաղողի երկու սորտերի ցուցադրական այգու, ֆիլոքսերադիմացկում խաղողի տնկանյութի արտադրության համար մայրուտային այգու հիմնում, ժամանակակից սարքավորումներով հագեցած պատվաստ կատարելու համար նախատեսված պատվաստի արհեստանոցի ստեղծում, վերապատրաստված անձնակազմ՝ պատվաստ կատարելու և տնկանյութ արտադրելու համար, երկրում ֆիլոքսերիայի մոնիթորինգի ազգային ծրագրի մշակում և առաջարկությունների ներկայացում՝ ֆիլոքսերադիմացկուն տնկանյութի արտադրության հավաստագրման համակարգի ներդրման համար:

Ծրագիրը հայ ֆերմերներին և ոլորտի մասնագետներին ուսուցանել են խաղողի տնկանյութի արտադրության նորագույն մեթոդների, ինչպես նաև՝ խաղողի այգիների ժամանակակից կառավարման, ներառյալ վնասատուների դեմ ինտեգրված պայքարի, կաթիլային ոռոգման համակարգերի, հակակարկտային ցանցերի, էտի և այլ հմտությունների վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ՝ այս ծրագիրը նպաստել է ԿԶՆ թիրախ 2.3-ին (կրկնապատկել փոքր պարենարտադրողների գյուղատնտեսական արտադրողականությունը և եկամուտները) և ԿԶՆ թիրախ 2.4-ին (ապահովել պարենարտադրության կայուն համակարգեր և ներդնել դիմակայուն գյուղատնտեսական գործելաձևեր, որոնք մեծացնում են արտադրողականությունը և արտադրությունը, օգնում են պահպանել էկոհամակարգերը):

Պարենային անվտանգությանը և սնուցմանն ուղղված կարողությունների հզորացում

1 2

Չնայած այն հանգամանքին, որ վերջին տարիներին արձանագրվել է զգալի տնտեսական աճ և տնային տնտեսությունների բարեկեցության բարելավում, Հայաստանը շարունակում է մնալ չափազանց խոցելի՝ գլոբալ տնտեսական ցնցումների, պարենի ու այլ ապրանքների միջազգային գների տատանումների և եղանակային ցնցումների նկատմամբ, որոնք բացասաբար են ազդում երկրների տնտեսությունների և ընդհանրապես պարենային անվտանգության իրավիճակի վրա:

2017 թվականից ի վեր Հայաստանում իրականացվում է ՊԳԿ «Պարենային անվտանգությանը և սնուցմանն ուղղված կարողությունների հզորացում» տարածաշրջանային ծրագիրը, որը ֆինանսավորվում է Ռուսաստանի Դաշնության կողմից: Ծրագրի նպատակն է ուժեղացնել սոցիալական պաշտպանության, սնուցման ու գյուղատնտեսական միջամտությունների միջև փոխադարձ կապերը պարենային համակարգերում՝ վերջիվերջո նպաստելու աղքատության ու պարենային անապահովության կայուն վերացմանը:

Ծրագրի շրջանակում Հայաստանում ստեղծվեց «Նպաստ+» մոդել, որն ուղղված էր սնուցման նկատմամբ զգայուն սոցիալական պաշտպանության միջոցով պարենային համակարգերի ամրապնդմանը՝ ընտանեկան նպաստները համալրելով գյուղատնտեսական անասունների կամ թռչունների և ազնվամորու տնկիների տրամադրմամբ, ի հավելումն վերապատրաստման, որպեսզի կարիքավոր տնային տնտեսությունները կարողանան կատարել արդյունավետ ներդրումներ և, վերջնական հաշվով, բարելավեն իրենց պարենային ապահովությունը և սնուցումը: Ընդհանուր հաշվով՝ ծրագիրն ընդգրկեց Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ու Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի «Նպաստ+» բաղադրիչի շահառու 133 տնային տնտեսություն, որոնք

մասնակցեցին սնուցման, հիգիենայի, պարենային անվտանգության ու ապահովության թեմաներով վերապատրաստման դասընթացների:

Ավելին՝ ծրագիրն օժանդակություն է ցուցաբերել Արարատի մարզի հինգ դպրոցներում երեք ջերմոցների և խնձորենու երկու այգիների ստեղծմանը՝ աջակցելու դպրոցական սննդի ապահովմանը, եկամուտների ստեղծմանն ու գյուղատնտեսական թեմաներով վերապատրաստմանը: Աղքատության, սովի և թերսնուցման վերացումը, միևնույն ժամանակ գյուղատնտեսությունն ու պարենային համակարգերը դարձնելով հարակայուն, պահանջում է ինտեգրացված մոտեցում: Դպրոցական սննդի ծրագիրը կարող է, իրականում, նպաստել տեղական գյուղատնտեսությանը, ամրապնդել ու բազմազանեցնել տեղական պարենային համակարգերը և օգնել մարդկանց աղքատությունից հանելուն՝ դպրոցներում պատրաստվող ուտելիքների համար տեղացի փոքր գյուղատնտեսական ձեռնարկություններից ու ֆերմերներից սննդամթերքի ձեռքբերման միջոցով: Ի լրումն, այնպիսի կոնկրետ միջամտությունների միջոցով, ինչպիսիք են առողջ դպրոցական սնունդը և պարենի ու սնուցման թեմայով կրթությունը, աշակերտները կարող են բարելավել իրենց սննդակարգերը, զարգացնել սնվելու ավելի առողջ սովորություններ և դրանք տարածել իրենց ընտանիքների ու համայնքների շրջանում:

Ընդհանուր առմամբ՝ ծրագիրը նպաստել է **ԿՋՆ թիրախ 1.1**-ին (ամենուրեք և բոլոր մարդկանց համար իսպառ վերացնել ծայրահեղ աղքատությունը), **ԿՋՆ թիրախ 1.2-ին** (առնվազն կիսով չափ կրճատել աղքատության մեջ ապրող բոլոր տարիքների տղամարդկանց, կանանց և երեխաների համամասնությունը), **ԿՋՆ թիրախ 2.1-ին** (վերջ դնել սովին և ապահովել անվտանգ, սննդարար և բավարար սննդի մատչելիությունը), **ԿՋՆ թիրախ 2.2-ին** (վերջ դնել թերսնվածության բոլոր ձևերին) և ԿՋՆ թիրախ 2.3-ին (կրկնապատկել փոքր պարենարտադրողների գյուղատնտեսական արտադրողականությունը և եկամուտները):

©FAO/Կարեն Մինասյան

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն
Հայաստանյան ներկայացուցչություն
Կառավարական շենք 3, 3-րդ հարկ, 362 սենյակ
Երևան 0010, Հայաստանի Հանրապետություն

Կազմի նկարը՝ ©FAO/Կարեն Մինասյան

Some rights reserved. This work is available under a CC BY-NC-SA 3.0 IGO licence

© FAO, 2020
CA8709HY/1/06.20